Արձանագրություն N 3

<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/30>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար աղբատար մեքենայի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Ծաղկաձոր 26 սեպտեմբեր 2019թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գ.Հայրապետյան
անդամներ՝ Ն.Խաչատրյան
Ա.Մեսրոպյան
Վ.Ամիրխանյան
Ն.Սիմոնյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. **Մասնակցի կողմից ճշտված փաստաթուղթ ներկայացնելու և հայտերը գնահատելու մասին**

(Գ.Հայրապետյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ
Սահմանված ժամկետում **<<ՏԱՐՈՆ-ՏԱՎՐՈՍ>> ՍՊԸ**-ն էլեկտրոնային տարբերակով ներկայացրել է փաթեթում բացակա փաստաթուղթը՝ Հավելված 1 Դիմում-Հայտարարությունը:
1.2 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման >> կարգի 42-րդ կետի պահանջները՝
Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	**Հայտի գնահատականը**
<<ՏԱՐՈՆ-ՏԱՎՐՈՍ>> ՍՊԸ	**Բավարար**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. **Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ **<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/30>>** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել **<<ՏԱՐՈՆ-ՏԱՎՐՈՍ>> ՍՊԸ** -ն՝ որպես հրավերի պահանջներին բավարարող միակ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. **ՀՀ Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ *26.09.2019թ.* հարցում կատարել ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ սույն նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարկելու օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. **Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Նիստին ներկա **հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը**	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Գ.Հայրապետյան	
Անդամներ՝ Ա.Մեսրոպյան	
Ն.Խաչատրյան	
Ն.Սիմոնյան	
Վ.Ամիրխանյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	